

# ԳՐԶԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳԱՌՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉԱՆ, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ: Աշխատասիրությամբ  
Պ. Հ. Հակոբյանի: Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տպարան, Էջմիածին, 1998, 815 էջ:

Ախալցխան բազմաթիվ նշանավոր դեմքեր է տվել հայ մշակույթին, գիտությանը: Նրանցից է խոշորագույն բանասեր Միաբանը՝ Գալուստ Տեր-Մկրտչյանը (1860-1919), որ ունեցել է դժվարին ճակատագիր և այնուամենայնիվ դարձել է հայագիտության առաջնակարգ դեմք: Մովորել է Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Փարիզի քաղաքական գիտությունների դպրոցում, ամբարել բազմաբնույթ հարուստ գիտելիքներ և պատրաստվել լուրջ գիտական գործունեության: «Միշտ ձգտել եմ և այժմս էլ ձգտում եմ կատարելագործվիլ բարոյապես և մտավորապես,- գրել է նա 1882 թ. ապրիլի 5-ին,- ապագայում արդյունավետ գործունեություն ունենալու համար... Վերջնական նպատակս է անպայման մեր խեղճ Հայրենիքին ծառայել»:

1887-ին Գ. Տեր-Մկրտչյանը հաստատվում է Էջմիածնում իբրև դպիր: Դժբախտաբար կարճ ժամանակ անց ծանր հիվանդությունը նրան ընդմիշտ զրկում է քայելու կարողությունից, հանգամանք, որն, անշուշտ, բացասաբար պիտի անդրադառնար երիտասարդ մտավորականի հետագա ճանապարհի վրա, թեպետ հոգեկան արիությունը երբեք չլքեց նրան: Ավելին, երբ նամակագիրներից մեկը կամ մյուսը դժգոհում էր առողջությունից, նա աշխատում էր հուսադրել: Նրան ցավ է պատճառել հատկապես Ն. Մառի հիվանդությունը. 1891 թ. հունվարի 10-ի իր նամակում Միաբանը գրում էր. «Հուսահատվելու ոչինչ չկա, միայն պետք է լավ պահպանվիլ... Եթե ես ի՞նչ անբուժելի հիվանդությամբս չեմ հուսահատվում, Դուք իրավունք չունիք մի փոքրիկ հագից վրդովվիլ»:

Գ. Տեր-Մկրտչյանին զբաղեցրել է հայոց պատմության ու բանասիրության խնդիրների լայն մի շրջանակ: Մեծ է նրա նպաստը նաև այդ գիտությունների օժանդակ ճյուղերի՝ վիճագրագիտության, դրա-

մագիտության, ուրարտագիտության, ազգագրության, հնագրության ասպարեզում: Ժամանակի պարբերական մամուլում հրատարակված նրա հոդվածները, ինչպես իրավացիորեն ինքն էր ասում մի նամակում, անպայման բերում էին մի նորություն՝ հենված լինելով հայտնի փաստերի նոր ընթերցման և կամ միանգամայն նոր փաստերի վրա: Նա գիտական եզրահանգման միակ հիմք էր ճանաչում փաստերի տրամաբանությունը և մերժում էր այլ շարժառիթներով թելադրված «խիզախ», հանդուգն վարկածները: Նրա եզրակացությունները գերակշիռ մասով հաստատուն և հուսալի էին, քանի որ բխում էին փաստական նյութի հնարավորիին չափ ճշգրիտ հաշվառումից: Միաժամանակ բուն վերլուծությունը, դրա ընթացքը բնորոշվում են կառուցիկությամբ ու պարզությամբ: Նրա ինքնատիպ մտքերը աչքի են ընկնում ձևակերպման վայելուչ հստակությամբ: Միաբանը դատապարտում էր աշխատանքի այն ոճը, երբ պատմությունը շարադրվում է՝ «հիմնված լի միամիտ հավելումների, խախուտ ընդհանրացումների և անփաստ ընդլայնումների վրա»: Նաև այս սկզբունքայնության ու խստապահանջության բերումով էր, որ նա դարձավ իր ժամանակի գիտության մեծագույն հեղինակություններից մեկը: Ի՞նչ վավերացումն այդ բարձր հեղինակության՝ 1900 թ. նրան ընտրում են Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության իսկական անդամ: «Գալուստը հայագիտության մեջ հմուտ մասնագետ և քաջածանոթ դեմք էր հայ և օտարագրի մասնագետների շրջանում, նա, որ մնայուն աշխատություններ ունի կատարած հայագիտության ասպարեզում, և իբրև անճնավորություն, մեծ հմայք ուներ շրջապատողների մեջ», - գրել է «Էջմիածին» շաբաթաթերթը 1920-ին:

Ծանր հիվանդությունը, սակայն, մեծապես վնասել է Գ. Տեր-Մկրտչյանին,

հետևաբար նաև՝ հայ բանասիրությանը: Չուրկ լինելով տևական աշխատանքի կարողությունից՝ իր մտահղացումները, գյուտերը սիրահոծար տրամադրում էր այլ գիտնականների, և վերջիններս իրենց հետազոտությունների մեջ էրախտագիտությանը էին հիշում Միաբանին, որ ոչ միայն գաղափարն էր տալիս, այլև նշում էր գործն ամբողջացնելու և խորացնելու ուղիները: Գիտության մշակների հետ աշխույժ նամակագրություն ուներ Գ. Տեր-Մկրտչյանը: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունեն նրա նամակները, որ մեծ մասամբ գիտական այս կամ այն հիմնահարցի քննության ուրվագծեր ու նախափորձեր էին: Հատկապես կարևոր են այդ առումով Ն. Մառին հասցեագրվածները, որ գերակշիռ են նաև քանակով:

Դարասկզբին գրած մի մահախոսականում Գ. Տեր-Մկրտչյանը նկատում էր, թե հանգուցյալի հիշատակը «պատվելու ամենալավ եղանակը կլիներ՝ միջոցներ հայթայթել նրա անտիպ մնացած աշխատությունները լույս ընծայելու համար՝ տալով հեղինակի մանրամասն կենսագրությունը և երկասիրությունների լիակատար ցանկը»: Գ. Տեր-Մկրտչյանի՝ բազում արխիվներում պահպանվող նամակները, ժամանակի պարբերական մամուլում ցրված հոդվածներն ու հետազոտական փորձերը ի մի հավաքելու և ժողովածուի մեջ ամփոփելու դժվարին գործը տասնամյակների որոնումներով զլուխ է բերել պրոֆ. Պիոն Հակոբյանը՝ Երևանի պետհամալսարանի հայագիտական կենտրոնի աջակցությամբ: Հայ բանասիրության դասականի «Հայագիտական ուսումնասիրություններ»-ի Ա հատորը լույս տեսավ 1979 թ. և լայն արձագանք գտավ հանրապետության գիտական մամուլում (ԵՊՀ հրատարակչություն): Այժմ ահա, երկու տասնամյակ անց, լույս է տեսել Բ գիրքը:

Ինչպես նշված էր Ա գրքի «Երկու խոսք»-ի մեջ, այն ընդգրկում էր հեղինակի «փոքրածավալ հետազոտությունների՝ և հրատարակված բնագրերի մի մասը», որ նվիրված են Ջ և հաջորդ դարերի իմաստա-

սիրական-աստվածաբանական ըմբռնումներին, ինչպես և՝ սրբախոսություններ, բնագրագիտական հոդվածներ, միջնադարյան առակագրությանն առնչվող հետաքրքրական նյութեր: Սույն Բ գիրքը բաղկացած է չորս բաժնից. «Մանր ուսումնասիրություններ և բնագրեր», «Ծածկագրություն և վիմագրություն», «Չանագան հոդվածներ և նկատողություններ», «Նամակներ»:

Գ. Տեր-Մկրտչյանի հետաքրքրությունների ոլորտում են եղել և՝ դավանաբանական բազմաբարդ խնդիրներ, և՝ բանասիրական-բնագրագիտական քննություններ, վիմագրական գյուտեր ու կռահումներ, վերծանություններ... Գիտական շրջանառության մեջ մուծելով Անանիա Շիրակացու, Պետրոս Սյունեցու, Անանիա Նարեկացու, Անանիա Մոկացու, Դավիթ Հարբացու, ուրիշների ցայդ անհայտ երկերը՝ նա լայն հեռանկարներ է բացել նոր, առավել հիմնավոր եզրահանգումների համար: Այդպիսի եզրահանգումներով, գիտական խորիմաստ դիտարկումներով են հստականշված Գ. Տեր-Մկրտչյանի «Ղազար Փարպեցու ձեռագրերը», «Փավստոսի ձեռագրերը», «Տիմոթեոս Կուրի Յակաճառութեան հայերեն թարգմանության ժամանակը», շատ այլ գործեր:

Ժողովածուի մեջ չեն մտել հայ պատմիչների՝ երկերի քննական բնագրերը՝ և ուրիշ աշխատանքներ, որ հրատարակված են առանձին գրքով: Այստեղ ընդգրկված չեն նաև հեղինակի հրապարակախոսական ու գեղարվեստական անտիպ երկերը: Դեռևս հայտնաբերված չեն նրա նամակներից շատերը: Ըստ հնարավորին՝ հավաքելով այստեղյանտեղ ցրված աշխատությունները, նամակները, օժտելով հմտալից ուսումնասիրությանը ու ծանոթագրություններով՝ պրոֆ. Պիոն Հակոբյանը հրապարակ է հանել ծանրակշիռ այս գույզ հատորը, ակնհայտ ու տեսանելի դարձնելով այն ներդրումը, որը Գալուստ Տեր-Մկրտչյանին դասել է հայագիտության մեծագույն երախտավորների շարքը:

Ա. Գ. ՄԱՂՈՅԱՆ